Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության
դատախազությունների 2017 թվականի դեկտեմբերի 2-ի կոլեգիայի համատեղ նիստի

Նախագահում էին՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը և ԱՀ գլխավոր դատախազ Ա.Մոսիյանը:

Մասնակցում էին՝

ՀՀ դատախազության կոլեգիայի անդամներ՝ Հ.Ասլանյանը, Դ.Մելքոնյանը, Վ.Հարությունյանը, Ա.Մարուխյանը, Ա.Հարությունյանը, Գ.Բաղդասարյանը, Գ.Պողոսյանը և Ռ.Ասլանյանը:

ԱՀ դատախազության կոլեգիայի անդամներ՝ Ա.Ավագյանը, Ս.Հակոբյանը, Ա.Գալստյանը, Ա.Բարսեղյանը, Կ.Գաբրիելյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Գաբրիելյանը, Կ.Սաֆարյանը և Վ.Ղահրամանյանը:

Ներկա էին՝ ԱՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Զ.Օսիպյանը, ԱՀ գլխավոր դատախազության դատախազ Դ.Գաբրիելյանը, ԱՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազ Է.Վերդիյանը, ԱՀ Ասկերանի շրջանի դատախազ Մ.Աղաջանյանը, ԱՀ Մարտունու շրջանի դատախազ Մ.Օհանյանը, ԱՀ Մարտակերտի շրջանի դատախազ Մ.Մանգասարյանը, ԱՀ Քաշաթաղի շրջանի դատախազ Ն.Պողոսյանը, ԱՀ Հադրութի շրջանի դատախազ Գ.Իշխանյանը, ԱՀ Շահումյանի շրջանի դատախազի պաշտոնակատար Դ.Ստեփանյանը, ԱՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազի տեղակալ Ա.Գրիգորյանը:

Հրավիրվել և կոլեգիայի նիստին մասնակցում էին՝ ԱՀ ոստիկանության քննչական վարչության պետ Ի.Գրիգորյանը և ԱՀ Բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության տեսչության պետ Ս.Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:

Զեկուցողներ՝
ԱՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետ Կ.Գաբրիելյան

ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյան

ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ.Բաղդասարյան:

Լսեցին ԱՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետ Կ.Գաբրիելյանին, ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանին և ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ.Բաղդասարյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Դավթյանը. Ա.Մոսիյանը, Լ.Բարսեղյանը:

Լսելով և քննարկելով շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակի վերաբերյալ **ԱՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետ Կ.Գաբրիելյանի, ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանի և ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ.Բաղդասարյանի** զեկույցները՝ ՀՀ և ԱՀ դատախազությունների կոլեգիաները նշում են, որ շրջակա միջավայրի բնական ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման խնդիրները համաշխարհային հանրությանը հուզող և հրատապ լուծում պահանջող հարցերից են: Այդ խնդիրների լուծման կարևորագույն նախադրյալը բնապահպանական և բնօգտագործման ոլորտների կայուն իրավական հիմքի ստեղծումն է, այդ թվում՝ շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցավոր ցանկացած ոտնձգության համար քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի անշեղ իրագործումը:

ԱՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

Սահմանադրական այս իրավունքը զերծ չէ տարաբնույթ ոտնձգություններից, սակայն պետությունն ունի պոզիտիվ պարտականություն՝ պաշտպանել շրջակա միջավայրը և ապահովել անվտանգ շրջակա միջավայր մարդկանց համար:

Էկոլոգիական իրավունքի առավել կոպիտ և վտանգավոր խախտումները հանցագործություններ են և պատժելի են անգամ ազատազրկման ձևով՝ հիմք ընդունելով էկոլոգիական իրավունքի խախտման առկա և նախատեսվելիք հետևանքները, դրա ազդեցությունը մարդկանց առողջության վրա:

Ելնելով հասարակության և պետության համար պատշաճ բնական միջավայրի պահպանության անհրաժեշտությունից, և այն փաստից, որ շրջակա բնական միջավայրը չի ճանաչում պետական սահմաններ, պետությունները պարտավոր են պատշաճ ուշադրություն դարձնել բուսական աշխարհի պաշտպանությանը: Առկա գլոբալ բնապահպանական հարցերը (կլիմայի փոփոխություն, օզոնային շերտի քայքայում, կենսաբանական բազմազանության կրճատում) արդեն իսկ բացասական են ազդում մարդկանց առողջության և անվտանգության վրա, հետևաբար մարդու գործունեությամբ պայմանավորված բացասական ազդեցությունը նվազեցնելուն ուղղված արդյունավետ միջոցների կիրառումը խիստ արդիական է և անհրաժեշտ:

Էկոլոգիական բացասական հետևանքների դեմ պայքարն իրականացվում է 4 ուղղությունով՝

1. կանխարգելիչ գործողությունների իրականացում,
2. բուսածածկի և էկոհամակարգերի պաշտպանություն,
3. արդյունավետ պատժիչ քաղաքականության իրականացում,
4. համագործակցություն:

Պետության կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ գործընթացին լիարժեքորեն ներգրավված են և՛ պետությունը, և՛ հասարակությունը:

ԱՀ քրեական օրենսգրքի 307-րդ (ՀՀ քրեական օրենսգրքի 296 հոդված) հոդվածը պատասխանատվություն է սահմանում ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման համար, սակայն այդ հոդվածի մասերի սանկցիան համահունչ չէ դիսպոզիցիայում նկարագրված գործողությունների բնույթին և ծանրության աստիճանին:

Մասնավորապես՝ անտառային ֆոնդի տարածքներում, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տարածքներում, հատումներն արգելված ծառերը, թփերը հատելու կամ ոչնչացնելու, պետական կամ մասնավոր սեփականություն համարվող բուսածածկը ոչնչացնելու կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելու համար, եթե այդ գործողությունները զգալի վնաս (ներկա դրությամբ՝ 200.000-400.000 ԱՀ դրամ) են պատճառել, նախատեսված են մեղմ պատիժներ, մասնավորապես, տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Ծանրացնող հանգամանքների դեպքում, երբ արարքը կատարվել է՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով, բնության հատուկ պահպանվող տարածքներում, խոշոր վնաս պատճառելով, Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված ծառատեսակների կամ բուսածածկի նկատմամբ (ներկա դրությամբ՝ 400.000-700.000 ԱՀ դրամ)՝ պատիժները նույնպես մեղմ են, մասնավորապես, նախատեսված է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կալանք՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Եթե քննարկվող հանցագործությունն առաջացրել է առանձնապես խոշոր վնաս (ներկա դրությամբ՝ 700.000 ԱՀ դրամից ավելի գումար), ապա պատիժ է նախատեսվում՝ կալանք՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, ազատազրկում՝ առավելագույնը հինգ տարի

ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ 400.000 ԱՀ դրամի չափով վնաս պատճառած անձի նկատմամբ կարող է կիրառվել տուգանք՝ 500.000 ԱՀ դրամի չափով, և կհամարվի, որ պետությունը կատարել է իր պատժիչ քաղաքականությունը, ավելին, ապահովել է մարդու իրավունքների պաշտպանության՝ իր պոզիտիվ պարտականությունը: Սակայն պատիժն ակնհայտ համարժեք չէ կատարված արարքի ծանրությանը և վտանգավորությանը:

ԱՀ քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ վիճակագրությունը վկայում է նրա տարածվածության մասին, ինչը հնարավոր է պայմանավորված լինի նաև նախատեսված մեղմ պատիժներով, որոնք չունեն բավարար կանխարգելիչ ազդեցություն:

Շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2015թ. գրանցվել է նման բնույթի 21 հանցագործություն (ԱՀ քրեական օրենսգրքի 303-րդ հոդվածով (Ջրային կենդանիներ և բույսեր ապօրինի արդյունահանելը) 3 դեպք, 305-րդ հոդվածով (Ապօրինի որսը) 9 դեպք և 307-րդ հոդվածով (Ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումը) 9 դեպք), որոնցով պետությանը պատճառվել է 12.858.500 (համապատասխանաբար՝ 549.000, 2.425.000, 9.884.500) դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 10.155.000 դրամը կամ 78.9%-ը:

2016թ. գրանցվել է նման բնույթի 15 հանցագործություն (ԱՀ քրեական օրենսգրքի 303-րդ հոդվածով՝ 4 դեպք, 305-րդ հոդվածով՝ 5 դեպք և 307-րդ հոդվածով 6 դեպք), որոնցով պետությանը պատճառվել է 6.994.500 (համապատասխանաբար՝ 3.862.000, 1.080.000, 2.002.500) դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 5.999.500 դրամը կամ 85.7%-ը:

2017թ. 9 ամսվա ընթացքում գրանցվել է նման բնույթի 19 հանցագործություն (ԱՀ քրեական օրենսգրքի 303-րդ հոդվածով՝ 7 դեպք, 305-րդ հոդվածով՝ 5 դեպք և 307-րդ հոդվածով՝ 7 դեպք), որոնցով պետությանը պատճառվել է 12.496.000 (համապատասխանաբար՝ 2.883.000, 7.000.000, 2.613.000) դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 2.690.000 դրամը կամ 21.5%-ը:

2016թ. ԱՀ բնական ռեսուրսների վարչության կողմից շրջակա միջավայրի դեմ ուղղված վարչական զանցանքներով վարչական տույժ նշանակվել է 28 դեպքով՝ 910.000 դրամի չափով, իսկ 2017թ. առաջին 9 ամսվա ընթացքում՝ 10 վարչական տույժ՝ 550.000 դրամի չափով:

Քննարկվող հանցագործության համար խիստ պատիժներ նախատեսված են ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում, մասնավորապես՝ 363-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է ազատազրկում առավելագույնը մեկ տարի ժամկետով, իսկ ծանրացնող հանգամանքների դեպքում՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ օրենսդիրն ապագայում այս արարքների համար նախատեսում է ավելի խիստ պատիժ, սակայն, հաշվի առնելով հարցի կարևորությունը, անհրաժեշտ է այն կարգավորել՝ գործող օրենսդրության մեջ փոփոխություն կատարելով:

Քննարկման ենթակա է նաև ԱՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասը՝ «Անտառներ, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տնկարկներ ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է կրակի, պայթուցիկ նյութերի կամ առավել վտանգի այլ աղբյուրի հետ անզգույշ վերաբերմունքի արդյունքում, և եթե այդ գործողությունները խոշոր վնաս են պատճառել՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից

հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Նշված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարվող հետևանքը նախատեսված է խոշոր վնասի ձևով, իսկ խոշոր վնասի չափը սահմանված է նույն օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասով՝ խոշոր վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը): ԱՀ քրեական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասից հետևում է, որ 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությամբ պատճառված վնասը սկսում է 200.000 դրամից և առավելագույն չափ նշված չէ (առանձնապես խոշոր չափի վնաս պատճառելը որպես հանցագործությունը ծանրացնող հանգամանք նախատեսված չէ և սահմանված չէ նաև առանձնապես խոշոր չափը), իսկ որպես պատիժ նախատեսվում է տուգանք՝ 300-500 հազար ՀՀ դրամի չափով, կամ ազատազրկում՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: Այսինքն, ստացվում է, որ նշված արարքով կարելի է պատճառել միլիոնավոր-միլիարդավոր վնաս և պատժվել տուգանքով՝ 300-500 հազար դրամի չափով, ինչը ևս համաչափ չի կարող համարվել:

Կոլեգիան արձանագրում է, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում նկատվում է շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քանակի կայունություն, ինչը չի կարող չմտահոգել՝ հաշվի առնելով ՀՀ-ի խիստ սահմանափակ բնական ռեսուրսները:

Այսպես, շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 281-298-րդ հոդվածների հատկանիշներով, 2011-2016թթ. կտրվածքով Հայաստանի Հանրապետությունում հարուցվել է 295 քրեական գործ, այսինքն՝ նշված ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի արձանագրվել է շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործության շուրջ 50 դեպք:

2011-2016թթ. շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված վերոհիշյալ 295 քրեական գործից 89-ը կարճվել է, 103-ը՝ կասեցվել, 103-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ինչպես ցույց է տվել 2011-2016թթ. վերլուծությունը, շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քանակում գերակշիռ են ծառերի ապօրինի հատման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների դեպքերը, որոնց դեմ պայքարը 2017թ. ընթացքում էականորեն ուժեղացել է, մասնավորապես.

Ապօրինի ծառահատումների դեմ պայքարի նոր ու վճռական փուլի մեկնարկ պետք է համարել 2017թ. հուլիսի 19-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ գլխավոր դատախազի կողմից հրավիրված օպերատիվ խորհրդակցությունը՝ ՀՀ դատախազության ղեկավար կազմի մասնակցությամբ:

Խորհրդակցության ընթացքում մանրամասն քննարկվել են ապօրինի ծառահատումների կանխարգելմանը, արձանագրված հանցագործությունների բացահայտմանը, համապատասխան քրեական գործերով իրականացվող օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննությանը, պետությանը հասցված վնասի ամբողջական վերականգնմանը, ապօրինի ծառահատումների կոռուպցիոն սխեմաներում ներգրավված անձանց բացահայտումն ապահովելուն վերաբերող հարցեր, անդրադարձ է կատարվել նաև այդ անձանց օրենքի ողջ խստությամբ պատասխանատվության ենթարկելուն խոչընդոտող այն հանգամանքներին,

որոնց իրավապահ համակարգը բախվում է քրեադատավարական պրակտիկայում: Հատուկ կարևորվել է անտառաշերտերի պահպանության և ծառահատումների ոլորտը կարգավորող օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերում առկա բացերը լրացնելու անհրաժեշտությունը:

Խորհրդակցության ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հատկապես կարևորել է ապօրինի ծառահատումների հետ կապված դեպքերով դատախազական հսկողության ուժեղացումը և այս բնույթի հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և հանցագործություն կատարած, այդ թվում՝ պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվության ենթակելու անխուսափելիության ապահովումը:

Հատուկ շեշտադրվել է ապօրինի ծառահատումների հետ կապված գործերով նախաքննության պլանավորման, հանցանքի կատարմանը կամ հանցանքը թաքցնելուն ներգրավված բոլոր անձանց, արարքներին իրավական գնահատական տալու անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, որ ապօրինի ծառահատման յուրաքանչյուր դեպքով կոնկրետ պահաբաժնի համար պատասխանատու պաշտոնատար անձանց վերաբերյալ նույնպես անհրաժեշտ է խորացված քննություն կատարել՝ պարզելու, թե տվյալ պահաբաժնից ծառի կամ ծառերի ապօրինի հատումն արդյո՞ք կապված չէ այդ անձանց կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները դիտավորյալ կամ անզգուշությամբ ոչ պատշաճ կատարելու հետ:

Խորհրդակցության ավարտին ՀՀ գլխավոր դատախազը կոնկրետ հանձնարարություններ է տվել հնարավորինս կարճ ժամանակահատվածում վերացնել ապօրինի ծառահատումների դեմ պայքարում իրավապահ մարմինների կողմից շոշափելի արդյունքներ ապահովելուն խոչընդոտող հանգամանքները:

Ի կատարումն ապօրինի ծառահատումների և այս ոլորտում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի հարցերի շուրջ 2017թ. հուլիսի 19-ին ՀՀ գլխավոր դատախազությունում հրավիրված խորհրդակցության ընթացքում տրված հանձնարարականների, ՀՀ գլխավոր դատախազությունում վեր հանվել են անտառաշերտերի պահպանության և ծառահատումների ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերում առկա այն բացերը, որոնք հրատապ լրացման անհրաժեշտություն ունեն, ինչը քրեադատավարական պրակտիկայում կնպաստի ապօրինի ծառահատումների դեպքերով քննվող գործերով նախաքննության արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես, անտառաշերտերի պահպանության և ծառահատումների ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ այդ ակտերը չեն նախատեսում.

- Ծառի հատումից առաջ և ծառի հատումից հետո հատատեղի տեղազննման, տեղազննմանն անտառօգտագործողի մասնակցության մասին պարտադիր պահանջներ:
- Բնափայտի մթերումն ավարտելու՝ անտառահատման տոմսում նշված առավելագույն ժամկետից հետո բնափայտը անտառտնտեսության տարածքից դուրս բերելու իրավիճակի կարգավորում և, ըստ այդմ, մթերումն ավարտելու՝ անտառահատման տոմսում նշված առավելագույն ժամկետից հետո բնափայտը անտառտնտեսության տարածքից դուրս բերելու համար նոր, փաստաթղթավորված թույլտվություն ստանալու անհրաժեշտություն:

Իր հերթին, վերոգրյալ կարգավորումների բացակայությունը քրեադատավարական պրակտիկայում հանգեցնում էր նրան, որ.

- Դժվարին էր դառնում հերքել քրեական գործով վարույթի ընթացքում ի պաշտպանություն անտառօգտագործողի կամ պաշտոնեական լիազորությունները պատշաճ

չկատարած անտառապետի բերված այն փաստարկները, որ անտառօգտագործողը շփոթմամբ հատել է անտառատոմսում նշված տեսակից կամ չափից տարբերվող ծառեր, իսկ անտառապետը հնարավորություն չի ունեցել անտառօգտագործողին կոնկրետ մատնացույց անելու հատման ենթակա ծառերը, քանի որ անտառօգտագործողը չի մասնակցել հատատեղի՝ ծառի հատումից առաջ կատարված տեղազննմանը:

- Դժվարին էր դառնում հերքել ապօրինի հատված փայտանյութը տեղափոխողի փաստարկն առ այն, որ ինքը տեղափոխում է իր մոտ գտնվող անտառատոմսում նշված նույն փայտանյութը, որը, սակայն, անտառատոմսում նշված ժամկետից ուշ է տեղափոխվում, քանի որ ավելի շուտ տեղափոխելու հնարավորություն չի ունեցել:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2017թ. հուլիսի 21-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարին է հասցեագրվել համապատասխան գրություն՝ առաջարկելով ապահովել վերոգրյալ բացերը սեղմ ժամկետում լրացնելու գործընթացը:

Վերոհիշյալ գրությունից հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ում ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցան երկու խորհրդակցություններ՝ առկա խնդիրներին հրատապ լուծում տալու հարցի հետ կապված:

Արդյունքում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից սույն թվականի նոյեմբերի 14-ին ստորագրվեց «Անտառօգտագործման պայմանագրերի ձևերը հաստատելու մասին» N 81 հրամանը, որով հաստատված՝ «Ծառուտի առուվաճառքի մասին» պայմանագրի օրինակելի ձևում սահմանվեցին պարտադիր դրույթներ այն մասին, որ.

- Մինչև ծառահատման աշխատանքը սկսելը ծառուտի գնորդը, այն է՝ ծառը հատողը, իրեն տրամադրված անտառատոմսը ներկայացնում է տվյալ տարածքի անտառապետին՝ հատման աշխատանքները սկսելու համար աշխատանքների իրականացման կոնկրետ տարածքը ճշտելու նպատակով:
- Հատված փայտանյութը գնորդին է հանձնվում գնորդի մասնակցությամբ կատարված տեղազննման արդյունքում կազմված հանձնման-ընդունման արձանագրության համաձայն, որում նշվում են ապրանքի անվանումը, քանակը, որակը, հայտնաբերված թերությունները, անտառից դուրս բերման ժամկետները:

Փաստորեն, վերոգրյալ դրույթների ուժով այլևս վերացել է ծառն ապօրինի հատած կամ պաշտոնեական լիազորությունները պատշաճ չկատարած անտառապետի կողմից այն փաստարկը բերելու հնարավորությունը, որ անտառօգտագործողը շփոթմամբ հատել է անտառատոմսում նշված տեսակից կամ չափից տարբերվող ծառեր, իսկ անտառապետը հնարավորություն չի ունեցել անտառօգտագործողին կոնկրետ մատնացույց անելու հատման ենթակա ծառերը, քանի որ անտառօգտագործողը չի մասնակցել հատատեղի՝ ծառի հատումից առաջ կատարված տեղազննմանը:

Բացի այդ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2017թ. նոյեմբերի 14-ի N 81 հրամանով հաստատված՝ «Կլոր փայտանյութի առուվաճառքի մասին» և «Ծառուտի առուվաճառքի մասին» պայմանագրերի օրինակելի ձևերում նախատեսվեցին պարտադիր դրույթներ այն մասին, որ ապրանքը սահմանված ժամկետում անտառից դուրսբերման անհնարինության դեպքում գնորդը պարտավոր է դիմել վաճառողին՝ ընդունման-հանձնման արձանագրության մեջ (ծառուտի առուվաճառքի դեպքում՝ նաև անտառահատման տոմսում) ապրանքն անտառից դուրս բերելու ժամկետը երկարացնելու համար, իսկ վաճառողը պարտավոր է նշված արձանագրության մեջ (ծառուտի առուվաճառքի

դեպքում՝ նաև անտառահատման տոմսում) կատարել փոփոխություն՝ ապրանքն անտառից դուրս բերելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ:

Փաստորեն, վերոգրյալ դրույթի ուժով այլևս վերացավ ապօրինի հատված փայտանյութը տեղափոխողի կողմից այն փաստարկը ներկայացնելու հնարավորությունը, որ ինքը տեղափոխում է իր մոտ գտնվող անտառատոմսում նշված նույն փայտանյութը, որը, սակայն, անտառատոմսում նշված ժամկետից ուշ է տեղափոխվում, քանի որ ավելի շուտ տեղափոխելու հնարավորություն չի ունեցել:

2017թ. հուլիսի 19-ի վերոհիշյալ խորհրդակցությունից հետո ՀՀ դատախազությունում, ի թիվս ենթաօրենսդրական վերոհիշյալ կարգավորումների անհրաժեշտության հարցերի, քննարկման առարկա դարձան նաև քրեադատավարական պրակտիկայում հաճախ հանդիպող և քննությանը խոչընդոտող հետևյալ հարցը.

- Առերևույթ ապօրինի հատված բնափայտի պահպանության գործընթացը կանոնակարգված չէ, ինչի բերումով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վարույթն իրականացնող մարմինը ստիպված է լինում բնափայտի պահպանությունն ապահովել տարբեր եղանակներով, այն է՝ լավագույն դեպքում՝ բնափայտը պահվում է ազգային պարկի կամ անտառտնտեսության տարածքում, իսկ հիմնականում, վերը նշված տարածքներում պահպանելու դժվարություններով պայմանավորված, հանցագործության առարկան հանձնվում է ենթադրյալ հանցանք կատարած անձի պահպանությանը՝ դրանից բխող անընդունելի հետևանքներով:

Վերոգրյալ հարցի հետ կապված իրավաչափ լուծումներ ապահովելու կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարին է հասցեագրվել համապատասխան գրություն, որից հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ում ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած խորհրդակցության ընթացքում արձանագրվել է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի բոլոր ստորաբաժանումներում հնարավորինս սեղմ ժամկետում կստեղծվի հնարավորություն՝ իրեղեն ապացույց ճանաչված բնափայտը մինչև 6 ամիս ժամկետով անվնաս պահելու համար:

ՀՀ գլխավոր դատախազի գրությունը նաև նշում էր պարունակում այն մասին, որ, նկատի ունենալով իրեղեն ապացույց ճանաչված բնափայտը տևական ժամանակով պահելու հետ կապված դժվարությունները, այդ բնափայտի՝ կորստյան կամ փչացման դեպքերը բացառելու համար, եթե իրեղեն ապացույց ճանաչված բնափայտի պատկանելության վերաբերյալ որևէ վեճ չկա, ապա այդ բնափայտի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրացումը վարույթն իրականացնող մարմնի կողմից «Հայանտառ» ՊՈԱԿ-ին կարող է թույլատրվել նախքան քրեական գործի ավարտը:

Վերոհիշյալ գրության հիման վրա արդեն իսկ ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է ապահովել, որպեսզի վարույթն իրականացնող մարմինը, նախքան քրեական գործով վարույթի ավարտը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի հիմքով, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանմանը թույլատրի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրացնել իրեղեն ապացույց ճանաչված փայտանյութը, եթե բնափայտի պատկանելության վերաբերյալ որևէ վեճ չկա:

Սրանով, փաստորեն, վերացվեցին մի կողմից՝ իրեղեն ապացույց ճանաչված փայտանյութը տևականորեն պահելու հետ կապված դժվարությունները, մյուս կողմից՝ իրեղեն ապացույց ճանաչված փայտանյութը զերծ պահվեց կորելու կամ փչանալու վտանգից:

Բացի դրանից, այս կապակցությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից նախաձեռնվեց նախորդ տարիներին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործերով որպես իրեղեն ապացույց ճանաչված փայտանյութը գույքագրելու գործընթացը, որի արդյունքները ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացվելուց հետո ՀՀ դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվեց ապահովել, որպեսզի վարույթն իրականացնող մարմինը, նախքան քրեական գործով վարույթի ավարտը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի հիմքով, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանմանը թույլատրի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրացնել իրեղեն ապացույց ճանաչված փայտանյութը:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական գործերով նախաքննության ընթացքում հաճախ հանդիպող և քննությանը խոչընդոտող հարցերի վերհանմամբ պարզվեց նաև, որ անտառի պահպանության համար պատասխանատու պաշտոնատար անձանց (օրինակ՝ անտառտնտեսության մասնաճյուղի տնօրենի՝ պահպանության գծով տեղակալի և մասնաճյուղի պահպանության ինժեների) լիազորությունները շատ դեպքերում նույնանում են, որի պատճառով քրեական գործով նախաքննության ընթացքում հնարավոր չի լինում հնարավորինս անհատականացնել անտառի պահպանության համար պատասխանատու յուրաքանչյուր պաշտոնյայի կողմից թույլ տրված արարքը, ինչն, իր հերթին, հանգեցնում է նրան, որ էապես դժվարանում է այն հանգամանքը պարզելը, թե նույն լիազորություններով օժտված ո՞ր պաշտոնյայի կողմից իր պարտականությունները դիտավորությամբ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում է տեղի ունեցել ապօրինի ծառահատումը:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենին հասցեագրվեց գրություն՝ ապահովելու, որպեսզի համապատասխան հրամաններում կամ աշխատանքային պայմանագրերում անտառի պահպանության համար պատասխանատու յուրաքանչյուր պաշտոնյայի իրավունքները և պարտականությունները հնարավորինս հստակ ու անհատականացված նախատեսվեն:

Հիշյալ գրության հիման վրա «Հայանտառ» ՊՈԱԿ-ում արդեն իսկ նախաձեռնվել է անտառի պահպանության համար պատասխանատու յուրաքանչյուր պաշտոնյայի իրավունքները և պարտականությունները սահմանող համապատասխան հրամանները կամ պայմանագրերը վերանայելու գործընթացը:

Ապօրինի ծառահատումների և այս ոլորտում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի խստացմանն ուղղված հաջորդ քայլը ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ոստիկանության պետին ուղղված գրությունն է՝ ապօրինի ծառահատումների կանխման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, բնափայտ տեղափոխող յուրաքանչյուր մեքենայի վարորդի կամ ուղևորի մոտ բնափայտը տեղափոխելու համար անհրաժեշտ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի ամբողջականությունը ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից ամենայն մանրամասնությամբ ստուգելու, ապօրինի ծառահատման և ապօրինի հատված բնափայտը անտառտնտեսությունից դուրս բերելու յուրաքանչյուր դեպքի կապակցությամբ համապատասխան օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և այդ ճանապարհով դեպքի ու ծառի պահպանման կամ անտառտնտեսությունից բացթողման համար պատասխանատու իրավասու անձի կապը ստուգելու անհրաժեշտության մասին:

Ի կատարումն վերոհիշյալ գրության պահանջների, արդեն իսկ մշակվել ու շրջանառության մեջ է դրվել ապօրինի ծառահատումների կանխարգելման ու տեղափոխման դեմ ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող համատեղ միջոցառումների պլան, որում տեղ են գտել նաև ՀՀ գլխավոր դատախազի կողմից շեշտադրված վերոհիշյալ ուղղություններով անցկացվելիք կոնկրետ միջոցառումներ:

Ապօրինի ծառահատումների կանխարգելման և տեղափոխման դեմ ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող համատեղ միջոցառումների պլանը ՀՀ գլխավոր դատախազությունից ուղարկվել է ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններ՝ համատեղ պլանում նախատեսված միջոցառումները դատախազությանը վերապահված լիազորությունների շրջանակներում ամենօրյա ուշադրության կենտրոնում պահելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված՝ ապօրինի ծառահատումների փաստերի առթիվ հարուցված քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ դատավարական հսկողության պրակտիկայի՝ ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ամփոփումը թույլ է տվել եզրահանգելու նաև, որ նշված գործերով ապացուցման առարկայի կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ ծառերի հատման վաղեմությունը հստակ պարզելու անհնարինությունը մեծապես խոչընդոտում է մեղավոր անձանց ի հայտ բերելու և նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու ընթացքին, այլ կերպ՝ քրեական դատավարության խնդիրների պատշաճ և լիարժեք իրագործմանը:

Իհարկե, ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործերով նախաքննության ընթացքում, որպես կանոն, նշանակվում են փորձաքննություններ՝ այդ թվում և ծառերի հատման վաղեմությունը պարզելու համար, որպիսի տվյալի առկայությունը շատ դեպքերում ունի որոշիչ նշանակություն՝ քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների համակցությամբ գնահատելու անձի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու, ինչպես նաև իրավասու պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորությունները պատշաճ կատարած լինելու հանգամանքները:

Սակայն, Հայաստանի Հանրապետությունում գործող փորձագիտական հիմնարկներից մշտապես ստացվում են պատասխաններ՝ վերը նշված հարցին պատասխանելու, այլ կերպ՝ նշված հարցի կապակցությամբ համապատասխան հետևության գալու անհնարինության մասին՝ այն պատճառաբանությամբ, որ բացակայում է ծառերի հատման վաղեմությունը պարզելու՝ գիտականորեն հիմնավորված մեթոդիկա:

Նկատի ունենալով այն, որ ծառերի հատման վաղեմությունը որոշելը, որպես կանոն, քրեական գործով խիստ կարևոր նշանակություն ունի, ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է խնդրո առարկա հարցի հետ կապված միջազգային փորձը: Արդյունքում պարզվել է, որ ծառերի հատման վաղեմությունը, ինչպես նաև ծառի և կոճղի նույնականության հանգամանքը, հնարավոր է ճշգրիտ որոշել դենդրոխրոնոլոգիական փորձաքննության արդյունքում:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ բնապահպանության նախարարին է ուղարկվել գրություն՝ փորձաքննության վերոհիշյալ տեսակի կատարման հնարավորությունը ապահովելու մասին, որի արդյունքում արդեն իսկ ձեռք է բերվել և «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին է հանձնվել ծառի հատման վաղեմությունը որոշող համապատասխան սարքը, կատարվում են աշխատանքներ ևս մեկ այդպիսի սարք ձեռք

բերելու և ՀՀ բնապահպանության նախարարության՝ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին հանձնելու ուղղությամբ:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով հարուցված քրեական գործերով նախաքննության ընթացքում առաջացող՝ նյութաիրավական բնույթ կրող խոչընդոտի վերաբերյալ հարցին՝ կոլեգիան նշում է, որ մինչև վերջերս հստակ չէր այն, թե ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող վնասն ինչպես պետք է գնահատվի պրակտիկայում, մասնավորապես, արդյո՞ք «վնաս» եզրույթը պետք է ներառի նաև շրջակա միջավայրի վերականգնման համար անհրաժեշտ գումարը:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում անտառային ֆոնդի տարածքներում, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տարածքներում կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելու կամ ոչնչացնելու, պետական կամ մասնավոր սեփականություն համարվող բուսածածկը ոչնչացնելու կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելու համար, եթե այդ գործողությունները զգալի վնաս են պատճառել: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսվում նույն գործողությունների համար, եթե դրանք համապատասխանաբար խոշոր և առանձնապես խոշոր չափի վնաս են պատճառել: Նույն հոդվածի 4-րդ մասում սահմանված են հանցագործությամբ պատճառված վնասի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը:

«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների» մասին ՀՀ օրենքը սահմանում է բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները և դրա հաշվարկման ու գանձման կարգը՝ որպես հատուցման ենթակա չափ սահմանելով այդ սակագների համապատասխան բազմապատիկները: Օրենքում օգտագործվող «հատուցման սակագին» և «հատուցման չափ» հասկացությունները հիմք են հանդիսացել իրավակիրառ պրակտիկայում ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման դեպքում «փաստացի վնասի» և «բնապահպանական կամ հատուցման ենթակա վնասի» տարբերակման, որոնցից առաջինը դիտվել է որպես հանցակազմի հատկանիշ, իսկ երկրորդը՝ բացառապես որպես հատուցման ենթակա արժեք: Ավելին, քրեական դատավարությունում բնապահպանական վնասի չափով ներկայացված քաղաքացիական հայցերը երբեմն թողնվել են առանց քննության՝ որպես հանցագործությամբ անմիջականորեն չպատճառված և քրեական դատավարության կարգով քննարկման և վճռման ոչ ենթակա վնաս:

Այդ տարբերակումը, սակայն, անընդունելի է և չի ապահովում բնական միջավայրի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանն ուղղված հասարակական հարաբերությունների քրեաիրավական լիարժեք պաշտպանությունը: Բանն այն է, որ մի կողմից բնությանն ու կենդանական աշխարհին պատճառված հատուցման ենթակա վնասը հաշվարկվում է համապատասխան կարգով՝ սակագների համապատասխան բազմապատիկներով՝ ընդունելով, որ վնասը հնարավոր է չեզոքացնել այդ հաշվարկով ստացվող արժեքով, մյուս կողմից՝ այն չի դիտվում որպես հանցագործությամբ պատճառված ռեալ վնաս և դուրս է մնում քրեաիրավական հարաբերությունների շրջանակից:

Այս հարցում միատեսակ իրավակիրառ պրակտիկա ձևավորելու ուղղությամբ նույնպես ՀՀ դատախազության կողմից նախաձեռնվել են համակողմանի քննարկումներ, որի

արդյունքում ընդունելի է համարվել ՀՀ դատախազության կողմից առաջ քաշված այն մոտեցումը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող «վնաս» եզրույթը պետք է ներառի ինչպես հատված ծառի ինքնարժեքը, այնպես էլ շրջակա միջավայրի վերականգնման համար անհրաժեշտ գումարի չափը՝ հաշվարկված «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների» մասին ՀՀ օրենքի համաձայն:

Հիշյալ մոտեցման իրավաչափությունը հիմնավորվում է նրանով, որ.

Նախ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշված «վնաս» եզրույթը միայն ծառի ինքնարժեքով գնահատելու պարագայում իրավակիրառողը, փաստորեն, որևէ նշանակություն չի տալիս նրան, որ շրջակա միջավայրի վերականգնման համար անհրաժեշտ է լինում ֆինանսական որոշակի ռեսուրս, առանց որի շրջակա միջավայրը նախկին տեսքի բերել հնարավոր չէ, այլ կերպ՝ առանց որի հանցագործությամբ պատճառված վնասը չի կարող վերականգնվել, հետևաբար վնասը շարունակում է առկա մնալ, որպիսի պայմաններում շարունակում են խախտված մնալ մարդկանց առողջության և կենսագործունեության պայման հանդիսացող բնական միջավայրի պահպանման ու արդյունավետ օգտագործմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Բացի դրանից, ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշված «վնաս» եզրույթը միայն ծառի ինքնարժեքով գնահատելու փաստական որևէ հիմք էլ չկա, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշված է «վնաս» և ոչ թե «փաստացի պատճառված վնաս» կամ «հատուցման սակագին» եզրույթը:

Այս մոտեցման օգտին է խոսում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցագործությանն առնչվող՝ պաշտոնեական հանցագործությունների հանրորեն վտանգավոր հետևանքների գնահատման պրակտիկան:

Այսպես, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից 2007 թվականի օգոստոսի 30-ին Արթուր *Ալբերտի Սարգսյանի* վերաբերյալ թիվ ՎԲ-142/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ «(…)Մասնավորապես, գործի նյութերից երևում է, որ Ա.Սարգսյանը, հանդիսանալով «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Սյունիքի անտառպետության անտառապետ, ի պաշտոնե կոչված լինելով անտառը պահպանել այլ անձանց կողմից կատարվող ապօրինի անտառահատումներից, ինքն է կատարել այդպիսի հանցավոր գործողություններ: Նրա կողմից կարճ ժամանակահատվածում ապօրինի հատվել է մի ամբողջ անտառամաս՝ 265 հատ տարբեր տեսակի ծառեր: Այդ հանցագործությամբ պետությանը պատճառված առանձնապես խոշոր չափի նյութական վնասը կազմել է 3.601.500 ՀՀ դրամ: «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված սակագների համաձայն՝ տվյալ դեպքում հատուցման ենթակա գումարի ընդհանուր չափը կազմում է 10.715.000 ՀՀ դրամ: Պատճառված վնասից որևէ գումար հատուցված չէ:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածը կոչված է պաշտպանելու մարդկանց առողջության և կենսագործունեության պայման հանդիսացող բնական միջավայրի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Իսկ այդ հարաբերությունները սոցիալական տեսանկյունից Հայաստանի Հանրապետության համար ունեն կենսականորեն կարևոր նշանակություն: Դա հաշվի առնելով, ինչպես նաև սույն գործի փաստական հանգամանքները, մասնավորապես՝ հատված ծառերի

թվաքանակը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործության հետևանքով պատճառվել է էկոլոգիական այնպիսի վնաս, որի վերականգնման համար անհրաժեշտ կլինի երկարատև ժամանակ և մեծ ջանք: Այսինքն՝ դատապարտյալն իր հանցավոր գործողություններով պատճառել է ծանր հետևանքներ, որոնք պատճառական կապի մեջ են գտնվում հանցավոր արարքի հետ: Հետևապես, առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ դատապարտյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք, որը բարձրացնում է կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, և որը դատարանի կողմից հաշվի չի առնվել(…)»:

Նույն կերպ՝ *ՏԴ2/0040/01/16* քրեական գործով, ըստ մեղադրանքի Մարինե Պետրոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը վերահաստատել է, որ պաշտոնեական անփութության հետևանքով առաջացած ծանր հետևանքներն իրենց մեջ ներառում են այդ անփութության արդյունքում ծառերն ապօրինի հատելու հետևանքով պատճառված վնասի հատուցման ենթակա չափը՝ հաշվարկված սակագների բազմապատիկներով: Վերաքննիչ դատարանը բեկանել և փոփոխել է նույն գործով առաջին ատյանի դատարանի դատավճիռը, որով արձանագրվել էր, որ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ենթակա չափը չի կարող հաշվի առնվել ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշ ծանր հետևանքը գնահատելիս և ամբաստանյալ Մարինե Պետրոսյանի արարքը վերաորակել էր նույն հոդվածի 1-ին մասով:

ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել:

Հետևաբար, եթե ծառերն ապօրինի հատելու հետևանքով պատճառված վնասի հատուցման ենթակա՝ սակագների բազմապատիկով որոշված չափը հանդիսանում է այդ հանցագործությանն առնչվող պաշտոնեական անփութությամբ անմիջականորեն պատճառված վնաս և դրա հատկանիշ, ուրեմն այն այդպիսին հանդիսանում է նաև ծառերն ապօրինի հատելու հանցակազմի դեպքում:

Կոլեգիան փաստում է, որ նշված ուղղություններով ՀՀ դատախազության կողմից նախաձեռնված գործողությունները հանգեցրել են նրան, որ, մի կողմից, էապես նվազել, այլ խոսքով՝ նվազագույնի է հասցվել ապօրինի ծառահատման դեպքի լատենտայնության կամ պաշտոնական վիճակագրությանն անհայտ մնալու հավանականությունը, մյուս կողմից, իրենց պաշտոնեական պարտականությունների կատարման մեջ դիտավորությամբ կամ անզգույշ կերպով թերացած անխտիր բոլոր անձանց նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, ինչը, բնական է, ուղղակիորեն իր դրական ազդեցությունն է թողել և թողնելու շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների նախականխման և կանխման արդյունավետության վրա:

Այսպես, ընդամենը ոչ լիարժեք 4 ամսվա ընթացքում՝ 2017թ. հուլիսի 1-ից մինչև 2017թ. նոյեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում, ապօրինի ծառահատման դեպքերով, ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է 71 քրեական գործ, ինչը ավելին է, քան 2011թ.-ից մինչև 2016թ. ընկած ժամանակահատվածում տարվա կտրվածքով հարուցված քրեական գործերի ընդհանուր թիվը:

Ապօրինի ծառահատման հետ կապված՝ պաշտոնեական հանցագործության դեպքերով 2017թ. հուլիսի 1-ից մինչև 2017թ. նոյեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում որպես

մեղադրյալ ներգրավվել է 15 պաշտոնատար անձ, որոնցից 8-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործերով նույն ժամանակահատվածում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 10 քրեական գործ՝ 14 անձի վերաբերյալ:

2012-2017թթ. ՀՀ դատարաններում քննված՝ ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման վերաբերյալ գործերով վիճակագրական հիմնական տվյալները հետևյալն են.

- 2012թ. դատարաններ է ուղարկվել 16 քրեական գործ՝ 20 անձի վերաբերյալ: Դատարաններում քննվել և ավարտվել է 10 գործ՝ 13 անձի վերաբերյալ:

- 2013թ. դատարաններ է ուղարկվել 10 քրեական գործ՝ 16 անձի վերաբերյալ: Դատարաններում քննվել և ավարտվել է 14 գործ՝ 17 անձի վերաբերյալ:

- 2014թ. դատարաններ է ուղարկվել 10 քրեական գործ՝ 11անձի վերաբերյալ: Դատարաններում քննվել և ավարտվել է 10 գործ՝ 11 անձի նկատմամբ:

- 2015թ. ընթացքում դատարաններ է ուղարկվել 11 քրեական գործ՝ 14 անձի վերաբերյալ: Դատարաններում քննվել և ավարտվել է 11 գործ՝ 14 անձի նկատմամբ:

- 2016թ. ընթացքում դատարաններ է ուղարկվել 8 քրեական գործ՝ 12 անձի վերաբերյալ: Դատարաններում քննվել և ավարտվել է 4 գործ՝ 4 անձի նկատմամբ:

- 2017թ. 1-ին կիսամյակի ընթացքում դատարաններ է ուղարկվել 5 քրեական գործ՝ 7 անձի վերաբերյալ: Դատարաններում քննվել և ավարտվել է 4 գործ՝ 6 անձի նկատմամբ:

Քննարկման օրվա դրությամբ, ՀՀ դատարաններում քննվում է ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման վերաբերյալ 16 քրեական գործ 24 անձի վերաբերյալ, այդ թվում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 5 գործ 7 անձի վերաբերյալ, նույն հոդվածի 2-րդ մասով՝ 6 գործ 9 անձի վերաբերյալ և 5 գործ 8 անձի վերաբերյալ, նույն հոդվածի 1-ին մասով:

Քննվող 16 գործից 8-ը դատարաններ է ուղարկվել սույն թվականի հոկտեմբերի 15-ից հետո:

Անդրադառնալով քննարկվող հանցագործությունների համար պատժողական պրակտիկային՝ կոլեգիան արձանագրում է, որ 2012թ. ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով քննված 10 գործով 13 անձից 2-ը դատապարտվել են ազատազրկման, 1-ը՝ կալանքի, 9-ը՝ տուգանքի, իսկ 1-ի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել:

2013թ. դատարաններում քննված 14 գործով 17 անձից 16-ը դատապարտվել է տուգանքի, իսկ 1-ի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել:

2014թ. քննված 10 գործով 11 անձից 2-ը՝ դատապարտվել է կալանքի, 6-ը՝ տուգանքի, իսկ 3-ի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել:

2015թ. քննված 11 գործով 14 անձից 2-ը դատապարտվել է ազատազրկման, իսկ 12-ը՝ տուգանքի:

2016թ. դատարաններում քննված 4 գործով 4 անձից 3-ը դատապարտվել է տուգանքի, իսկ 1-ի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել:

2017թ. դատարաններում քննված 4 գործով դատապարտվել է 6 անձից 1-ը դատապարտվել է ազատազրկման, իսկ 5-ը՝ տուգանքի:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի վերլուծությունը վկայում է ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումների վերաբերյալ գործերով դեռևս օրենսդրի կողմից սահմանված՝ այդ արարքի բնույթի, վտանգավորության աստիճանի տարածվածության և որոշիչ այլ կրիմինոլոգիական հատկանիշների պայմաններում մեղմ պատժողական քաղաքականության մասին: Իսկ ներկայացված վիճակագրությունը վկայում է դատական պրակտիկայում այդ քաղաքականության դրսևորման մասին:

Ինչպես ցանկացած հանցագործության, այնպես էլ ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումների դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից կարևորելով ճիշտ ու, որ պակաս կարևոր չէ, միասնական պատժողական քաղաքականության մշակումը, ՀՀ գլխավոր դատախազությունում քննարկվել և սահմանվել են ընդհանուր չափանիշներ քննարկվող գործերով մեղադրական ճառերով մեղադրողների կողմից միջնորդվող պատժի տեսակի և չափի սահմանման վերաբերյալ:

Նկատի ունենալով այս հանցագործության տարածվածությունը և դրա դեմ պայքարի առաջնահերթությունը՝ նախևառաջ առաջ է քաշվել այս գործերով պատժողական քաղաքականության ընդհանուր խստացման պահանջ, որը հիմք է դառնալու քրեահրավական ներգործության մեղմ միջոցները դրանց անհրաժեշտության մասին վկայող հանգամանքների ավելի բարձր կշռով պայմանավորելու համար:

Հանցագործության բնույթը, այն շահադիտական շարժառիթով և կազմակերպված հանցավոր մեխանիզմով իրականացնելու դեպքերի աճը պատճառ է դարձել հստակ սահմանելու, որ, որպես կանոն, օրենքով նախատեսված մեղմ պատիժ մեղադրողը միջնորդում է հանցագործությամբ պատճառված վնասը վերականգնված լինելու դեպքում:

Ելնելով վերոգրյալից՝

Կոլեգիան որոշում է՝

1. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին, ԱՀ գլխավոր դատախազության բաժինների պետերին, ԱՀ շրջանների և Ստեփանակերտ քաղաքի դատախազին՝

1) Ակտիվացնել շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, այդ թվում ապօրինի ծառահատումների դեմ պայքարի ոլորտում դատախազական հսկողությունը և հետևողական պայքար ծավալել այս բնույթի հանցագործությունների ինչպես կանխարգելման, այնպես էլ բացահայտման և հանցագործություն կատարած անձանց (այդ թվում նաև պաշտոնատար անձանց), պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

2) Ապօրինի ծառահատումների դեպքերով քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս, ինչպես նաև դատարաններում մեղադրանք պաշտպանելիս, անշեղորեն ղեկավարվել ՀՀ գլխավոր դատախազի մոտ 19.07.2017թ. տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցության արձանագրության պահանջներով՝ բացառելու համար նմանատիպ գործերով պրակտիկ մոտեցումների տարբերությունը:

3) Խստացնել ապօրինի ծառահատումների վերաբերյալ քրեական գործերով պատժողական քաղաքականությունը, որպես կանոն, բացառելով դատական ճառում պատիժը պայմանական չկիրառելու մասին միջնորդություններ կատարելը այն դեպքերում, երբ ամբաստանյալի կողմից չի վերականգնվել հանցագործությամբ պատճառված վնասը, իսկ նշված կանոնի խախտմամբ դատական ակտերի կայացման դեպքում բողոքարկել դրանք:

2. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

Հայտնաբերված ծառահատման յուրաքանչյուր դեպքում, եթե առկա է տվյալ, որ ծառահատումը կատարվել է Արցախի Հանրապետության տարածքում, ապա այդ մասին տեղեկատվությունը անհապաղ փոխանցել ԱՀ դատախազության համապատասխան ստորաբաժանում՝ ստուգողական գործողություններ կատարելու նպատակով:

Առերևույթ ապօրինի մթերված փայտանյութ հայտնաբերելու յուրաքանչյուր այն դեպքում, երբ առկա է հիմնավորված տվյալ՝ փայտանյութը Արցախի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված լինելու վերաբերյալ, ապօրինի ծառահատման դեպքի առթիվ նախապատրաստված նյութերը կամ հարուցված քրեական գործը ՀՀ գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղեկալին հասցեագրված զեկուցագրով ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազություն՝ ԱՀ գլխավոր դատախազություն ուղարկելու համար:

3. ԱՀ գլխավոր դատախազության բաժինների պետերին, ԱՀ շրջանների և Ստեփանակերտ քաղաքի դատախազին՝

1) Հայտնաբերված ծառահատման յուրաքանչյուր դեպքում, եթե պարզվում է, որ ծառահատումը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, ապա այդ մասին տեղեկատվությունը անհապաղ փոխանցել ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանում՝ ստուգողական գործողություններ կատարելու նպատակով:

Առերևույթ ապօրինի մթերված փայտանյութ հայտնաբերելու յուրաքանչյուր այն դեպքում, երբ առկա է հիմնավորված տվյալ՝ փայտանյութը Հայաստանի Հանրապետությունից Արցախի Հանրապետություն տեղափոխված լինելու վերաբերյալ, ապօրինի ծառահատման դեպքի առթիվ նախապատրաստված նյութերը կամ հարուցված քրեական գործը ԱՀ գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղեկալին հասցեագրված զեկուցագրով ներկայացնել ԱՀ գլխավոր դատախազություն՝ ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու համար:

2) Ապօրինի ծառահատման դեպքերով հարուցված քրեական գործերով ծառերի հատման վաղեմությունը որոշելու, ծառի և կոճղի նույնականության հարցը պարզելու նպատակով փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության դեպքում օգտվել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի հնարավորություններից:

4. ԱՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետին՝

1) Սեղմ ժամկետում նախապատրաստել և ԱՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել գրության նախագիծ՝ հասցեագրված ԱՀ գյուղատնտեսության նախարարին՝ առաջարկելով ՀՀ օրինակով լրամշակել անտառօգտագործման պայմանագրերի ձևերը հաստատելու վերաբերյալ ԱՀ-ում առկա իրավական ակտերը:

2) Սեղմ ժամկետում նախապատրաստել և շրջանառության մեջ դնել ԱՀ քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական նախագծերի փաթեթ, որով, ՀՀ օրինակով, կնախատեսվի

խստացնել ապօրինի ծառահատումների համար ներկայումս նախատեսված պատասխանատվությունը և կիրառվելիք պատիժները:

5. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

Այսուհետ Արցախի Հանրապետության գլխավոր դատախազություն ուղարկել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի որոշումները, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացված նախադեպային որոշումները, ինչպես նաև ՀՀ քրեական, քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **Ա.ԴԱՎԹՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **Ա.ՄՈՍԻՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Ա.ՄԱՐՈՒԽՅԱՆ**